

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Գալարարութիւնները ընդունուում են ամեն լիզուով:

Յալարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր ըստ ին 2 կողմի:

Օտարազգացացիք զինում են ուղղակի
Трудовой Редакция „Мир“

ՄԵՍԿ

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւնը Նամակ Հ. Բայազէթի, Նամակ Սեփազի, Նամակ Կաղէթի, Նամակ Խմբագրի, Նամակ Խմբագրի, Նամակ Խմբագրի, Ներքին լուրեր, Արտաքին տեսութիւն, Ամերիկա, Նամակ Թիւրքիայի, Արտաքին լուրեր, Սաւան, Լուրեր, Վաշինգտոն, Ներքին լուրեր, Յայտարարութիւններ, Տեղեկացոյց, Բանասիրական, Նամակ ՆԱԳՈՒԹԻՒՆ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ԲԱՅԱԶԷԹԻՑ

18 մայիսի

Բայազէթի չիջանի քուրդ ազգաբնակիչները բաժանուում է երկու զլխաւոր ցեղերի՝ Արամիսիւնի-Հեյրաբանի-և Զալալի-Կեօալանի: Առաջին ցեղի նահապետը, կամ ցեղապետն է միջաւայր-Մամադ-աղա-օղլին, որ արդէն ծանօթ է «Մշակի» ընթերցողներին իմ առաջին (15 ապրիլի ցրած) նամակից իր համակրութեամբ դէպի հայերը մասնաւորապէս և հիւրասիրութեամբ առհասարակ. երկրորդ ցեղի աղեն է Աթաշանուն մէկը, որ մերձաւոր ազգականն է հանգուցեալ զենեքաւ-մայր Զաֆար-աղայի: Արալի-պատի և յարգանք վերջինս վայելում էր Ռուսաստանում, նոյնպիսին ընդունում է Աթաշ Զաճկաստանում, բայց մեծ տարբերութիւն կայ այդ երկու անձնաւորութեանց մէջ՝ գրանց մէկը միւսին հակառակ տիպեր են ներկայացնում: Զաֆար-աղան յայտնի էր ինչպէս խելօք, խոհմ և հիւրասիր, անձն նա երբեք թոյլ չէր տալ իրան ապականելի, խմբեր, պահել յափառակութիւններ անելու գիտամբ, իսկ Աթաշը ընդ հակառակը, յայտնի է Թիւրքիայի-Հայաստանում ինչպէս մարդկերայ գաղութ, աւաղակների պաշտպան, չափազանց ծրատ և անհիւրասիր, կրօնամոլ, կայսեակեր և խաբէբայ անձն: Այդ Աթաշ-աղան նա նման միւս միայն ձայն և նշանակալիւն ունեցող քուրդ-ազգայնէրն էին, որոնք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱՌՈՒԹԻՒՆ

19 մայիսի

Այս, հոգեւոր վախճաւ իս հեալեա մի գեղի խորքներէնցը գիրէն չիմ ձիւ: Երբ թեա բուն չիմ գիրէն, չի, բեանեար շօտ կօ, հեամ ունչ իրիս գիրէն չի գիրէն գիրի մոյն ա մի գիրեացեաց հեատի, դիմ գեալեամ ա շքամին բեարած, ջալին տարածու: Դէ հըը, հեարվի թեա մըկէլ տարուն ալ, մոյն գեարդեակը դուս անէլ ակած, ալ ընչիւր ահիս գիրում անէլ ձիւ կաղէթամը մի գեալեացեաց հեատի: Իս ունչըմ գիրում գեղի քիւ-չեաքը ծօռըմօր քըրքըրողն, կեղեցիուն վալտեա կաթուղիկօն քեանդվեալ ա, գընին խօշը ծըրվէմա միւր ըլիօլի վեարեան ա նեղ գիրէն թէա ըլիօլ, քեանդվեալ ա, ալ ըլիօլ չին տարած, թեա միւր խալըր անհամաձայնը... Էն իս ունչըմ գիրում հըրգօր մոյն բիւն անէլ գիրէն, ում մըրին ալ--Համա ունչ ա գիրեանեալ լինի-հեղը սերեսասօր մոյն տարուց իվիլ գիրել ա գիրել: Կալա անիւրի ինքը բեղարեալ եհո նըստել, եատքին ալ մըրիթիլ բըմանալան հեալեա: Անիւր անչ իրիս, միւր օրհնված, գեղեցեացիք մագեղեա օխտի ընգընձ, քիւնըն թէ կուղ ընգընընթալ հըրգօր զուռնա փէլ, քիւնից հօ ալ մոյն ըրթանիլ չին: Ալ մոյն իրաք իրաք մայաք չին նալիլ, թեա անիւր հօկ ալ ունչ վախճալ ալ

անցեալ տարվայ յունիս ամիս առաջին կիսում, օգուտ քաղելով Բայազէթի պաշարումից և առհասարակ Բայազէթի սանձակի անպատկան հրուսթից, մորեկի պէս յարձակելովով Բայազէթ և Ալաշկերտ չիջանիների անդէն հայ գիւղերի վրա, աւարի առան հայոց կայքը: Քըրդերը թալանել և յափշտակել քաջութիւն են համարում: մինչև անգամ երբ հայը դատ է բացանում իրան թալանողի դէմ, վերջինս առանց երկիւղի և կարծես ինքնահաւանութեամբ, պատանդանում է թալանի եմ արել և ոչ գողութիւն, ես գող չեմ: Նրանք ժամանակի էին սպասում իրազործել իրանց կարծած քաջութիւնը: հայերի գլխին: Ահա 1877 թի յունիսի ամիսը աւետեց նրանց՝ այդ պատեհ ժամանակը և քըրդերը խմբերով աղաների առաջնորդութեամբ, մարդասանձ գազանների նման յարձակվելին խեղճ խաղաղաւէր, աշխատաւէր, և անդէն հայ գիւղերի վրա, աւերեցին և յափշտակեցին նրանց, և դիմարելի համարձակողներին անհնապ օրի անցկացրին: Իսկ նոյն թի հոկտեմբեր ամսին, Թիւրքերի բանակը իսմայիլ-փաշայի առաջնորդութեամբ ջալից դէպի էրզրում և ուսսապ զորքը յաղթանակով հետեւում էր ինչպէս հայ գիւղերը, այն քըրքերը, որոնք գուցէ երբեք ըրովին յաղթված համարելով, մտածում էին Ռուսաստանի հայերին, իսկ ինքնարկել իրանց հարեան հայերի զորութեանը խմբերով թողնելով իրանց բնակութիւնները, դաղթեցին մասամբ Վանի և Մուշի կողմերը և մասամբ Պարսկաստանի սահմանը: Երբեք և իրանց աւարը հայերի հարստութեանը, փախչողների պարագլուխ էր Աթաշ-աղան: Երբ մեր կառավարութիւնը կրկին հաստատվեց իսմայիլի, երկրի բնակչութեանը, հայր իր ընտանիքի անդամները մէկ մասը պահ տալով հողին, կրկին նահանգում վերադարձաւ իր հայրենիքը, այն հայրենիքը, որի հեա նա կապված է իր հայրենի գերեզմաններով, մանկական յիշողութիւններով և վերջապէս իր գոյութեամբ: Հայը թանկելով իրան ազատ, աւելի երջանիկ է համարում իրան իր ներկայ թշուա գրութեան մէջ, քան թէ առաջ իր հարստութեան մէջ: Հայ գիւղացին իր կողմով տված կայքի մէկ, թէ և աննշան, մասը կարող

իմիք միջ հեատը իրա մընհանձ՝ ամման կողմանէ: Կա գիւղի իսկիմարտը չին հարմութեա անիւր ալ ըտալվա վախճալի, օր ուսը գըրիս քըրքերին թայամը հեղիւն քիւրքերին խեարեա, թեա էմ ուսըն լիգրաւ իչ, ալ ան վախճալի: հըրգեա աղա աշխարհըս սըտանա ա դեառած, հըրգեա մօրք հըրգօր մոյն սըտանալ թիւններով գըտալա: գերեամ մոյն էարկիլ չօնի փոլ չիլին: Հըրգեա մեանեակ խիլքը, տաւանա բիւն տալիս ում օր իսլը ուսում չօնի պըրծէթա նըրօ բիւնը: չիւնքի անըսում ուխմանը լուսաւոր, ուսում աւած ըմմընաւաց կըշտա մահա մոյն հէլիւն: ալ ունչ ա գեարիլ նօ չիլի նըրուց ըտալին: Մոյն վրտի անել, օր սաղ Նուխու վընեայաթը, սաղ հեառը-գիւ գիւրիի ձեարքին անէլ, հըրգօ ունչ ա դեառեած, քանի նօ սըրգ-հեանքի ալ բէթիալ ա զեանեաց: Հեալեա կայնի մոյն ամման եաներքամ սեարուն ճընապարհներ չինին, թեկգրափներ սըրքատին, իլաքի թուղ օր ըրկաթն ճընապարհներն ալ մոյն պուտի չըտընանին: դէ ան վախճալ թամաչօ արա, տիս ունչ ա դըռնեալ միւր ըմմընը տաց հալը: թեալբօր հեատի իսաւարեան մընալաց: Ձիւ հըլըտացալանմը օր, հօկ սըտանա փռանգներ ամման ծակի մանղ մըտեալով ըլտեղ օր մոյն աշխատանքի տուրք գիւղանին, դիմ գիւղեացին իրանց ձեաքը, միւր խալին լափ տըլըրցանին հացից գիւնի: Անիւր ունչ ա կրեաց չինի միւր խալըր անեառակած սըտանա փռանգներին կըշտան թուղ օր սըրգ-հեալեալին էլին, հօկ չարին ըլիօլներ սըրքելու, իրանց ըրխարաց ուսում տալու, չօտըն փըլմանի վերջամը: Հեալեա հեղ միաթիտներ անալ չին գիրում, օր հէսէ չիւտը եատի սըրքեալացըն միլանից ալ զօշին հըլաքին, ուրտի օր սաղ Ռուսթիթամ հըլաքամըն: անվախտը ում օր ուսում ծնի մոյն տարիկէն, արկիւ տարի դուլ-

ղացալ յետ ստանալ քըրքերից *) և համարված է որ կարճ միջոցում իր հողի արդաւանդութեան և իր աշխատանքի շնորհով բարեկեամք տէրութեան հովանաւորութեան ներքոյ հանելու է իր առաջին նիւթական հարստութիւնը: **) Իմ ժողոված տեղեկութիւններից երևում է, որ Բայազէթի չիջանի 10 հայ գիւղերի վախճալ, բացի քըրքերի յօժարակամ վերադարձրած և յափշտակութեանց աղատ մնացած կայքերից, հասնում է 150,000 ռ.: Քըրքերի յարձակման ժամանակ հայ գիւղականներից սպանվել են 25, իսկ Նիւսանի հահանդում մեռել են 300 մարդ արական և իգական սեռի: Այժմ տեղական օկրուժիի նախաձեռնիկ միջնորդութեամբ սպառնում ենք օգնութեան տէրութեան դանձաբարից, և արդէն չիւրքերի վերադարձնալու պահանջները, յարգելով պահանջը, տեղեկութիւն թէ քըրքերը իրաւունք կարող են օգնութեան յատկապէս ցանքի համար, և որքան հարկաւոր է նրանց, օգնութիւնը Պաշտօնապէս հաւաքած տեղեկութիւնից յայտնվեց, որ Բայազէթի չիջանի 10 գիւղերում այժմ գտնվող 300 ընտանիքից 247 ընտանիք չունեն ալ եղներ, ոչ արօր և ոչ ցա նեղու, սեբմ Գաւառապետի և տեղական մէշլիսի խորհուրդը օգնութեան քանակութիւնը բոլոր 10 հայ գիւղերի համար օրուց 29, 146 ռուբլ: Այս փողերով պէտք է գնել 247 լուծ եղը, այդ

*) Այս դէպքում ևս Աղամանի քըրքերի ցեղապետ Միլիթ-աղան ոչ պակաս գործակցում է տեղական նաչալեկին և ելէլ քըրքերի միւս աղաներին էլ հետեւին սրա օրինակին, այն ժամանակ հայն իր կողմով տված կայքի մեծ մասը կարող էր լինել ստանալ: Բայց որովհետեւ թալանի մեծ մասը աղաների մօտ է, ուստի (վերջիններս աւարի վերադարձնելուն իրանց են արգելք լինում: ***) Այստեղի հայը մտածում է բարեբեկ իր նիւթական գրութիւնը, միայն թէ ևս այժմ մասամբ ուրիշ կերպ մտածել անկարելի է: Բայց իմ հետազոտութիւնը հասցնում է ինձ այն եզրակացութեան, որ մեր եղբայրները իրանց հարուստ ժամանակն էլ կամ շատ նշին ունչ են դարձել մտաւոր զարգացման վրա, կամ բոլորովին անհոգ են եղել այդ մասին, այս առիթով դուրս ելանք անգամ գրելու միջոց կրենքսպի:

քան արօր և 3705 փուլ ցորեն—սեբմացու հետեալ հաշուով իւրաքանչիւր օգնութեան կարօտ ընտանիքը մի լուծ եղ, մի արօր և 15 փուլ ցորեն յանձնել, քանհատելով մի լուծ եղը արօրի հետ 100 ռուբլ, և ցորենի փուլը 1 ռուբլ 20 կոպ: Կեո յայտնի չէ թէ այդ գրամագուլը փոխարինաբար պէտք է վճարվի գիւղացիներին թէ միանուգ շնորհվելու: Է հայ կողմից աւանդներ իրանց տընտեսականութիւնը բարեբեկութեամբ թէ այն պէս և թէ այնպէս, այդ օգնութիւնը անհրաժեշտ է և գիւղացիք պատրաստ են փոխարինաբար ընդունել այդ գումարը միայն առանց տոկոսի: Բացի սրանից պ: Մանդալօվի առաջադրութեան հիման վրա օր նահանգապետը միջնորդութեամբ բարձրագոյն իշխանութեան մի յայտնի ժամանակ կողմով և զրկված հայերին աղատ թողնել հարկաւորութիւնը: Նամակ վերջացում էի, երբ ինձ լուր բերին, որ իբր թէ, Խամայի-փաշան զլխաւոր է՝ առել 25 քըրքի և կաղանաւորել է Բայազէթի վանի կողմերը փախսած թիւրքը: Դարիֆ-Ֆէշեդուն, որ Բայազէթի քաղաքացիութեան գլխաւոր պատճառն է և հայերի հարստութեան մեծ մասը, 300,000 ռուբլ արժողութեան սեփականացրել էր: Կա ծանոթացում

Մատթէոս ՏԵՐ-Պետրոսեանց

ՆԱՄԱԿ ՍԱՆՈՒԹԻՒՆ

26 մայիսի

Որքան վառ բան է մեր մէջ արմատացած այն վատ սովորութիւնը, որ անկող հիւրերը թէ մարդիկ և թէ կանայք մեծ բազմութեամբ մողովում են: Երբեք տարած ճաշին (քիւրքի), և տարած մեծ վախճալի հայտնում մեռելատիրոջը: Վէլիցիլին, որ Սիւնդիլի 30 վերստաչափ հեաւորութիւն ունի, չը նայելով որ նա մի միջակ մեռելութեամբ գիւղ է կարողացել է այն չարիքը առաջն առնել: Մարտ ամսի վերջերին այնտեղ վախճանվում է պ: Յովհաննէս Գալանթարեանցը, «Պարոն» մականունանալ: Նրա թաղան հանդիսին ներկայ են լինում բացի հայերից և չաւ վրացի իշխաններ և իշխանի վրէժ ճաշի ժամանակ անկող ամ

իմ չիւ պար գերծիւմ իղեալեաց ալ հօլան չիք կալի, անվրախիս օր դիւք բիւլ օնիք նէ, ներքուք ձիւ հըրքեաւտան դեօրիւմըն ընել, հըրքեա տիւնեամը նըրուց էարկիլ էարկիլ բիւլօնիլը, ընթերցացը ջուկ տեսեամը նըրուց ընթերցացը: հեալա գիւղի անվիլ ջուռա ջուռա կարգադրութիւնները նաւալ չիւ: Ձիւ հօն անուն օնիք, իղեալեաց իրաք սեարին իրաց հեատի առաջին հօկ ձիւ ալ իսկի սպալի չին նալիլ—գիւ մա նըրուց հօլան մօր կօ տիւնիք ձիւ ուլ ա հօլան կօ, թեա օր դեատի նեաք մընալաց:

Համա մոյն բիւն ալ կօ, ալ տարի միւր լուսալոցի հոգեօր դարցի խափանվուուն տօսը տարին թըմալ ա, աւուր հիւլի յոյս օնիլ օր միւր գըրքեալեաց բալը թեա ապաւոր ըլիօլի հեատի մոյն բիւն արին, չի օր անիւր մալ զալու նա ալ մոյն բեանի կըպելու հեատի մընալա տօսը տարի ա ժամանակ, և աւուր հիւլի ալ ուխման մետաղի պ աշխատի պտ տօսը տարվա դալիստը կըքանի դէս: Մընալ հօկ պատճառա իս միծ յոյս օնիլ, օր միւր իշխանիլը թիւլ չին նալիլ օր ըլիօլ խափանվուուն տօսը տարի եունց կօ, թեա չէ զըրիւստըմ նահալ օր ալ գըօնըմ բուրովիլ իրաց հիւրմաթըն ալըն կըրցանիլ պատիւներն ալ, թեա մարդի կըշտա, թեա Աստուծո ըտալի: Հըրքեալի օր իրաց ըրիւսըն ալ վեադեաւընա ակնարները բեօցըն ըրիւլաց տիւնեալ իրաք ունչ զըրքեա նեամըն, նըրուք ալ ընթերցեալըն իրաց ծընողներին անիլին, օր իրաց ուսումի չին տըվէծ:

Մեղքործման անունը յիշիլ ունչ, միջ հեատի սարքը գիւնի միւր ըլիօլ: Հըրքեա ունչ եթիմ Մեղքործմա մալտեղ ունչ ալ ճլաւաց Պուրուզ նեան ՏԵՐ-Ալուր, նըրուք եիւրն քալվալ, բեաա

բոլոր, բացի այն որ լցնում է նրանց մեծագույն բաղձը, առաջնորդ տեղադրվում է հրապարակա- ների համար պատրաստված սեղանի վրա և նը- րանց թողնում է առանց տեղի: Տանտեղը շուտով այս դեպքից հարկադրվում է խնդրել սղաւոր և հրապարակա կանանցից, որ գոնէ նոքա տեղի տան ճաշելու այս մարդկանց իրանց համար պատրաստված սեղանի վրա և իրանք սպասեն դուրսը: Ներկայ եղողները զայրանալով այս իրողութեան վրա, նոյն օրը ճաշից յետոյ պայման են կապում, որ այսուհետեւ եթէ այս մարդկանցից որ, առանց հրաւերի երթայ մեռելատանը ճաշել, նա ետեւը թողնի տուգանք վճարի յօգուտ ընդհանրութեան և եօթն օր ևս բանտարկվի: Իսկ կանաք—երեք թուր ատու- գանք վճարեն և երեք օր ևս բանտարկվեն: Այս պայմանաթուղթը այնքան ներգործութիւն է ունեցել այնտեղի բնակիչներին վրա որ այնու- հետեւ ոչ միւրը առանց հրաւերի այլ ևս չէ հա- մարձակվում գնալ այնպիսի տեղերում, մա- նաւանդ որ Սգնաղի նահանգապետին են դիմել նրանք այդ պայմանաթուղթը հաստատելու որ նայն միջոցին այնտեղ է պատահում: Որքան լաւ կը լինէր, որ Վէլսլիքի 1-2-րդ օրը բազմա- ներ էլ, մանաւանդ Սգնաղի օր. Թէլաւը, որ աւելի մօտ են նրան, օրինակ առնելին այս իրողութիւնը և վերջ տային իրանց մէջ արմա- տացած այս աւելորդ և չուայ ծախսերին: Միթէ առաւել լաւ չէր լինի, որ մեռելատեղերը, փո- խանակ այս անպատու և վնասակար ծախսերի քսա չափի իրանց կարողութեան, իրանց քա- ղաքների ուսումնարաններին նուրբէին մի որո- չեալ գումար և նրանց աղբիւրները շատացնէին որոնց մասին միշտ անմիջական ջանքերով են լավում և որի պատճառով զրկված են արժանա- ւոր ուսուցիչներից:

Այլով ամսին այստեղ ժողով կազմվեցաւ նոր երեցիկության ընտրութիւն: Ս. Կարապետ եկեղեցու համար: Նրա երեցիկության պ. Գոմեշի Ամիր- խանեանցը, իր ծերութիւնը պատճառ բերելով քանի մի անգամ խնդրեց հոգևոր կառավարու- թեանց որ արձակեն իրան այս պաշտօնից: Այս պարտքը, իր նախորդից, որ մօտ 11 տարի էր վարել երեցիկության ծախսերը, ստացել է 11 1/2 ֆ. սպիտակ, իսկ 3/4 ֆ. դեղին մամ, որոնց արժեքով են գինը իսկաւսած է 17 ր. և 5 4., և պարտավորեցանք 2711 րուբլու, որից ներկայ երեցիկությանը ստացել է 1000 րուբլ. իսկ մնա- ցածը անապահով տեղեր լինելով մնացել են մինչև այժմ ստանալու: Թէև աշխատում է նրանց մա- սին Ժողովի անդին հարց գործակալը յայտնեց որ այսուհետև սինօքի հրամանի համաձայն, երեցիկությանից ոչ միւր իրաւունք չունի եկեղեցական փողերը իր կամովը շահեցնելու, այլ պարտական են կամ բանկը յանձնել այն և կամ հոգ. կառավարութեան թոյլատրութեամբ շահեցնել արժանաւոր գումարակալով: Այնուհետև պ. Աղէքս. Ամիրխանեանց կարգաց իր հօր, որ ներկայ չէր ժողովին, տասնամեայ հայւր և ցոյց տուաւ թէ իւրաքանչիւր տարին որքան օգուտ է ունեցել եկեղեցին և որքան ծախս, և յայտնեց իր հօր կողմից որ այնուհետև ինքը հրաժարվում է այս պաշտօնից: Բնդանուր գու- մարի օգուտը եղաւ վերոյիշեալ 1000 ր. հետ 8219 րուբլ 89 1/2 4., ծախսը 7749 ր. 28 1/2 4. սրանից 8034 ր. 54 1/2 4. ծախսել է զանգա- կատան շինութեան վրա, որ մի հոյակապ շի- նուածք է և որի նմանը դեռ չը կայ և Թիֆլիս- ում: Պ. Ամիրխանեանցը, իր կարողութեան չափ աշխատել է եկեղեցու թէ ներքին և թէ արտաքին պակասութիւնները լցուցանելու և այս պատճառով թէև ժողովուրդը ցանկացաւ դարձեալ նրան ընտրել, որ եկեղեցին էլ նո- րուցէր Թիֆլիսի նորոգված եկեղեցիների հա- մեմատ: Բայց չը յաջողվեց այս և այս պատ- ճառով ժողովուրդը ընտրեց նրա որդուն պ. Աղէքսանդրին, որից մեծացաւ է, որ կարգաւոր- ձի ժողովրդի իր վրա ունեցած համարունքը:

ՆԱՄԱԿ ԴԱՎԻԹԻՑ

3 յունիսի

Այնչէս բան չը մնաց, որ ներկայ ժամանակում մեր քաղաքներին առարկայ չը գտնուէր, և գրա- սէրների գրչին նման: Բայց ոչ որ միւր անգամ չանցաւ գրել Կաղէթ գիւղի վրա, որը բազկա- ցած է մօտ 200 տնից: Չը նայելով որ այս գիւ- ղացիք մեծ մասամբ թշուառութեան, աղքատու- թեան մէջ են, դարձեալ ուղում են նոքա իրանց մէջ ծխական ուսումնարան հիմնել: Բայց ոչ է ուղարկութիւն դարձնում, ով է նրա վրա մտա-

ծում և ով պատճառ լինում: Թեմական տեսուչը շատ լաւ կանէ իր ուղարկութիւնը դարձնել նոյն գիւղի վրա, ուսումնարան հիմնելու նպատակով: Լուել այդպիսի մի վնաս ու աղքատութեամբ զործի մասին, աղքատներ մարդու գործ չէ: Զիչեալ գիւղի մերձակայքում, Շամշուղ գիւղի մօտ Աստուածածին անունով ուխտատեղի կայ: Մեր հոգևոր կառավարութիւնը ևս աւելի լաւ կանէ այդ ուխտատեղիին այն արդիւնքը նուրբել յօգուտ Կաղէթի թշուառ հասարակութեան, յանձնելով հաւատարմ մարդկանցից ձեռքը յի- չեալ գիւղում ծխական ուսումնարան հիմնելու: քան թէ յանձնված է մի քանի անգործունէայ քահանաների ձեռք, որոնք շատ կարելի է յիշալ ուխտատեղիի արդիւնքի 1/3 մասը ցոյց չը տան հոգևոր կառավարութեան: Կրանից ինչ օգուտ է հարկէ ոչինչ:

Տ. Զ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ալէքսանդրօպօյ 29-ին մայիսի

«Մշակ» լրագրի 85-րդ համարի մէջ կարդացիք քանի մի խորհրդածութիւններ, որոնք ծագել էին ձեռնարանի դ. դաստան ալէքսանդրօպօյի աշակերտների տու ձեռք ուղարկած նամակից, որոնց մասին պարտք համարեցի ինձ գրել այս նամակը, չը նայելով որ նամակագիրը իր ձեռքով ուրիշ անունը ևս ոտորագրած է իր յօ- դուածի տակ, և մի առ մի ձեռք հաղորդել է գործի եղելութիւնը:

«Մշակ»-ի 74-րդ համարում պ. Վ. Տ-ի գրած յօդուածի մի երկու տողերը որք վերաբերում էին վերոյիշեալ ալէքսանդրօպօյի աշակերտ- ներին, ստիպեցին նամակի տակ առաջին ձեռք քաշողին գրել այն նամակը, մի երկու պարտե- ների յորդորանք, իբրեւ պաշտպանելու ձեռնա- րանի պատուը և այլն, և այն Ալէքսանդրօ- պօյում և ոչ լքմիւնում կամ ձեռնարանում, ինչպէս գրված էր յօդուածի դուրսը և հա- կացվում էր խորհրդածութիւններից, որով և փա- րատվում է նոյն աշակերտների լքմիւնի և ձե- մարանի ու շատերի բարի աղբիւրութեան տակ լինելու և լրագրիներ կարգաւ արգելվելու կար- ծիքները և այլն:

Անս այդ Ալէքսանդրօպօյում գրած նամակն էր, որ մերժում էր թէ՛ ձեռնարանի դ. դաս- տան ալէքսանդրօպօյի աշակերտաց հետ մի այնպիսի անցք չէ անցկացել և արդարև ոչ թէ՛ դ. դաստան, այլ և դաստան նոյն քա- ղաքացի աշակերտների հետ է պատահել, որոնք ալ ևս ձեռնարանի աշակերտներ չեն, և ևս ևս կա- ռող եմ վկայել այդ մասին թուաբանութեան վերաբերութեամբ:

Կնքում եմ նամակս խնդրելով որ եթէ արժան համարէք տպագրէք ձեր պատուական թերթերի մէջ, և մեծ յոյս ունեմ որ կը փարատվեն քանի մի սխալ կարծիքներ:

Հ. Ստամբուլեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ալէքսանդրօպօյ 29-ն մայիսի

Կարդացի «Մշակ» 74 համարում տպված Վ. Տ. ստորագրութեամբ յօդուածը, որի մէջ պ. յօդուածագիրը խօսելով ձեռնարանի վրա, ասում է՝ «Թէ այժմ տեսնում ենք ձեռնարանի և դա- ստան մօտ 20-ի չափ աշակերտներ արձակված և վերջը աւելացնում է մի անցք, որ իբր թէ պատահել է ձեռնարանի դ. դաստան ալէք- սանդրօպօյի մի աշակերտի հետ:

Այս բանը հեռի վրէնով ճշմարտութիւնից խն- դրում եմ բարեհաճէք տպել իմ այս երկտող նա- մակը ձեր լրագրի մէջ: Նա ի՞նչ ձեռնարանի և դա- ստան աշակերտներ, 14 հոգի, չեն արձակ- ված ձեռնարանի կառավարութիւնից, այլ իրանք իրանց կամքով դուրս են եկել, զո՞ւ լինելով ձե- մարանի ապագայ բարեկարգութեան և երկ- րորդ որ այն անցք չէ պատահել դ. դաստ- տան աշակերտի, այլ և դաստան աշակերտի ինձ հետ, իսկ միւս գրուածքները բոլորովին ու- ղիկ են, որովհետև առաջին երկու տարին ձե- մարանում կրկնեցին Ալէքսանդրօպօյու հոգևոր զպրօցում մեր սովորած թուաբանութիւնը և գրա- հայւր (Алгебра), իսկ երրորդ տարին հաղի- սկեցինը շարունակել, բայց չը յաջողվեցաւ:

Այս խօսքը թէ ինչ որ սովորել էինք Ալէք- սանդրօպօյի հոգևոր զպրօցում վերադառնալու ցի- ցիք, ընդհանրապէս ուղիղ է, որովհետև ոչ միայն թուաբանութիւն, այլ նաև բնագիտութիւն,

երկրաչափութիւն, մաթեմատիկա և գործա- րանագրութիւն Ալէքսանդրօպօյում աւարտած մտանք ձեռնարան և այնտեղ կրկնելով, դեռ կըր- կնութիւնը չաւարտած դուրս եկանք:

Իսկ այն յօդուածը որ գտնվում է 85 համա- րում, պ. խմբագրիկ ուղղած Պօղոս Տէր-Պօղո- սեանց, Ննովը Կեօնջեանց և Համբարձում, Ստամբուլեանց ստորագրութեամբ բաւական ու- ղիղ է գրած, որովհետև պ. պ. յօդուածագիրները, Ալէքսանդրօպօյի հոգևոր զպրօցի երկուրդ դա- ստանը աւարտած մտել են ձեռնարանի առա- ջին դաստան, իսկ ևս և իմ միւս ընկերը ստիպված մի քանի հանգամանքներից, չորրորդ դաստանը աւարտելով, մտանք ձեռնարանի գ. դաստանը:

Այս յօդուածի վերաբերութեամբ ներքին լու- րերի մէջ արած դիտողութիւնը ուղիղ է, միայն աչքի առաջ չէ ունեցել պ. յօդուածագիրը որ բացի այդ պարունակից կային և կան ձեռնարա- նում ալէքսանդրօպօյի մի քանի աշակերտներ, բայց զոյանից ունանք դուրս եկան և ունանք դեռ ձեռնարանում են և այդ պարունակը ոչ թէ ու- սուցի, այլ մի քանի պարունակ էր և տէր հայր երկ բարի աղբիւրութեան առաջ լի- նելով այդ նամակը գրեցին, ցանկալով պաշտ- պանել ձեռնարանի պատուը, վարկը և առնել:

Ս. Դ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 2 յունիսի

Ուղարկելով ձեռք 70 րուբլ յօդուած Արարա- տեան ընկերութեան վարժարանի, որ ևս հաւա- քել եմ Թիֆլիսում ստորագրութեամբ, խնդրեմ այդքան բարի լինէք, նայելով այդ գումարը ուր հարկն է և ուղեք նուիրատուների հետեւալ անունները:—Ռ. Ն. 5 րուբլ, Ա. Ն. Ն. 1 ր., Գոմեշեան Թ. Ստեփանեանց 1 ր., Միխայիլ Շա- դինեանց 1 ր., Իսահակ Բուդաբեանց 10 ր., Ն. Ն. 3 ր., Ի. Տէր-Միքայելեանց 1 ր., Սողո- մոն Ղարաբեանց 1 ր., Գեորգ Շադինեանց 1 ր., Արտեմ Սեդեանց 5 ր., Иванъ Гумиевичъ Ма- гаевъ 2 ր., Թադէոս Գոմեշեանց Խաչատու- թեանց 1 ր., 50 4., Գրիգոր Չակիբեանց 1 ր., Артеми Малаговы 1 ր., Գրիգոր Աբուլեանց 1 ր., Կարապետ Նազարեանց 1 ր., Вугданъ Ме- виновъ 3 ր., Нина Эфендова 1 ր., Անյայտ 1 ր., Асатуръ Гиргидовъ 1 ր., Նիկոլայ Բարա- նասեանց 1 ր., Գարեթէ Տէր-Պետրոսեանց 1 ր., օջՅե եօճեօջ 2 ր., Գրիգոր Դեմուրեան 1 ր., Н. Д. Джанджугазовъ 1 ր., Նիկողայոս Պօղարեանց 1 ր., Э. Палисовъ 1 ր., Бериновъ 1 ր., Ալէք- սանդր Բուտուրով 1 ր., Ստանիսլավ Չարուկչի- նով 2 ր., Եօջիմ Յեօճեօջ 1 ր., Григоріи На- сибянцъ 1 ր., Անյայտ 50 4., Գալոթ Պաղօ- վեանց 1 ր., Տէրբան Խաչիկէ 50 4., Խանդա- միրեանց 1 ր., Михаилъ Коргановъ 1 ր., Մար- տիրոս Գ. Հաննազարեանց 50 4., Արտեմ Զու- բարեանց 1 ր., Զ. Աբուլեանց 1 ր., Բաբա- նասեան 1 ր., Գ. Թումանեանց 1 ր., Яковъ Алавердовъ ր., Э. И. Абесоломовъ 15 ր., А. 50 ր., В. 1 ր., Г. 35 ր.:—Ընդամենը 70 րուբլ:

Գեորգ Թումանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ» № 89-ի մէջ յօդուած Արարատեան ընկերութեան վարժարանի հաւաքած նուիրա- տութիւնների ցուցակի մէջ սխալմամբ չեն տպվել պ. Բ. Խաչուրեանցի և Սիմեոն Խաչա- դեանցի աղգանունները, որոնք նուիրել են իւ- րաքանչիւր մի րուբլ:

Հինգաբլթի յունիսի 8-ին Թիֆլիսի գերմա- նական կուլթի դահլիճում մի քանի հայ ուսա- նողներ պ. Տէր-Կաթեանի մասնակցութեամբ մի հայերէն ներկայացում կը տան յօդուած Արարատեան գիշերօթիկ վարժարանի, Ներկա- յացումն հետեւալ կերպով է կազմած. «Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փոք չունենք», «Էս էլ քի մօցիլըութիւն» հեղ. հանդ. Տէր- Գրիգորեանի և Զաւենի, որ քաղցածք է հետե- վալ համարներից. «Ելի» ոտանաւոր, Գամառ- Բաթիկայից ոտանաւոր, Կիլիկի և Զարոյ, Մի պատկեր, հեղ. Գ. Արծրունու: Չէ կարելի չը համարել հայ ուսանող երիտասարդներին, որոնք իրանց սրտին այդքան մօտ են ընդունել Թիւր- քիայի մանուկներին կրթութեան դրօժը, Զոյս

ունենք, որ հասարակութիւնը կը խրախուսի երիտասարդներին իր ներկայութեամբ:

Ստացանք «Արարատ» ամսագրի ապրիլ տե- տրակը, որի մէջ մեր ընթերցողներին համար ոչինչ չը կայ հետաքրքիր:

Երէկ յունիսի 6-ին «Մշակ» համարը չը հը- րատարակեցինք տօնի պատճառով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ

Նիւ-Եօրկից մայիսի 5-ին «Independance Belge» լրագրին գրված մի նամակից քաղում ենք հետեւեալը:

«1876 թւին կատարված նախագահական ընտրութիւնների վէճիկից դեռ չենք աղա- տված: Դեմոկրատների պարագլուխները առա- ջիկայ շարքի կառավարին խորհրդարանին որ մասնագահական ընտրութիւնների ժամա- նակ մի քանի նահանգներում խորհրդառու- թիւններ եղած լինելու» ամբաստանութիւն: Ներքը քննվին: Երեկ որ այդ առաջարկութիւնը կրնաւ լինի:

«Առաջիկայ աշունքի ընտրութիւնների ժա- մանակ, երի թէ մեծ խռովութիւն կը լինի: Մշակների կուսակցութիւնը այնպէս յուզված է որ նրա գրութիւնը անհանգստութիւն և վախ է պատճառում, մանաւանդ արեւմտեան նա- հանգներում ուր սնուանվում է ազգային կու- սակցութիւն (National party): Վախնում են թէ այդ կուսակցութիւնը բոլոր մշակներին գործադուլ անել կը տայ, որ աւելի սոսկալի կը լինի քան թէ անցեալ ամառվայ գործադուլը և մշակները գէնքը ձեռքին և պատերազմական կազմակերպութեամբ պատրաստված կը լինեն: Այս նոր կուսակցութիւնը գաղտնի մի մեծ ընկերութիւն է որ ունի 280,000 անդամ: Ներքը Արդէն պարս պատրաստված է թէ ինչ կազմակերպութիւն պէտք է ունենայ հետե- ւակ զօրքերի, հեծելազօրքերի և դիվիզիա- ների բաժանվելով: Միայն Նիկազում 50,000 զօրք է ունեցել այդ գաղտնի ընկերութիւնը: Սեն-Լուիսում երկաթուղիների և գլխաւոր գործարանների մշակները գաղտնի դաշնակ- ցութիւն են հաստատել և երգվել են հնա- գանդվել ազգային կուսակցութեան հրաման- ներին: Սինսնատիում մշակներից զօրագուն- դեր են կազմում: արանցից ամեն մէկը պար- տաւոր է մէկ հրացան գնել: Արեւմտեան ու- լիշ շատ նահանգներում մի և նոյն տեսակ շարժումներ են նշմարվում: Շատ հաւանական է որ այդ հրատարակված թւերը չափա- զանցութեամբ են գրված: Պոլեցիան չէ կար- ծում որ խռովարարների թիւը ապագայում մի քանի հազարից աւել լինի, բայց թէ գոր- ծադուլ լինի, այդ անգործ մարդիկ դիւրաւ կը սկսեն մի փոքրիկ բանակ կազմել, ինչպէս պատահեցաւ այդ Պիտերսբուրգում 1877 թւի յուլիսին: Եւրօպայի սօցիալական տարրը մեծ դեր է խաղում այս յուզումի մէջ որի իսկ նպատակը շատ որոշ չէ որ գիտնանք թէ մինչև որ աստիճան պէտք է վախենալ նը- րանցից: «Tribune» լրագիրը ասում է թէ միջազգային ընկերութիւնն է որ զանազան հնարքներով աշխատում է նորից գործադուլ անել տալ մշակներին: Եւ կարծում եմ թէ գերմանացի սօցիալականները որոնք խիստ շատ են արեւմտեան կողմում, գլխաւոր գրգը- ուիչներն են այս նոր յուզման: «Volksstimme» լրագիրը, իրանց օրգանը Սեն-Լուիսում, յայ- տնապէս քարոզում է գէնքով գիմարութիւն անել: Իլլինոյսի իշխանութիւնները շատ հոգս չեն անում այս շարժումների վրա: Նի- կազում կառավարիչը հրացանի փամփուշտ- ներ (կարտուշ) բաժանեց ազգային պահպան զօրքերին: Board of Brade և գլխաւոր վա- ճառականները նշանաւոր գումարներ նուիրե- ցին որ պոլեցիան լաւ զննաւորվի: Սեն-Լուիսի

և Մինսկի մարզի լրագրողները մեծ տառերով յօդուածներ հրատարակելով հրաւիրում են տեղական իշխանութիւններին որ զգուշ լինեն և չիկազդէին կառավարչին օրինակին հետեւնալ Բայց կասկածում են որ 1877 թւի անկարգութիւններէն բաւական չեն խրատված և մի խռովութիւն եղած ժամանակ հարկաւոր կը լինի որ դաշնակցական կառավարութիւնը միջամտի Սմոլնիկայի Միացեալ-Նահանգներին մէջ Նիւ-Սօրկին է միայն որ լաւ կազմակերպված ազգային պահպանների զօրաբանակ ունի։ Այդ նահանգն էր միայն որ անցեալ յուլիս ամսում կարողացաւ անկարգութիւնները զսպել առանց հրաւիրելու կանոնաւոր զօրքերի բանակը։

Ռուսաստանի և Անգլիայի մէջ պատերազմի հաւանականութիւնը ամենին հետաքրքրում է թէ արդեօք Ամերիկայի Միացեալ-Նահանգները ինչ դրութիւն կունենան։ Ամերիկայի կը յարգէր չէզոքութիւնը։ Այդ մասին տարակոյս չը կայ։ Եթէ հասարակական կարծիքը կարելի է խմանալ լրագրողներէն։ Այնու ամենայնիւ, այս էլ անտարակուսելի է որ Ռուսաստանը կարող է վատահ լինել թէ այստեղ շատ համակրողներ կունենայ։ Անգլիայի դէմ ամերիկացիների ատելութիւնը դեռ չէ դադարած, որչափ էլ շատ ժամանակ անցած և դիպլոմատիական լաւ յարաբերութիւններ հաստատված լինեն։ Իրանցացիների մի մեծ գաղթականութիւն կայ այստեղ որ պահում է Անգլիայի դէմ իր ունեցած ատելի ատելութիւնը։

ՆԱԽԱԿ ԹԻՒՐԻՍԻԱՅԻՑ

Էրզրում, 25 մայիսի

Քաղաքական պրոպագանդան հորիզոնը կարծես սկըսում է արգելէն պարզվել, որի հետ պիտի պարզվի և հայ ժողովրդի պաշտպանութիւնը... Ստանում ենք միտմարական լուրեր կոնգրէսի կայանալու մասին, որի մէջ պիտի պատուաւոր տեղ բռնէ հայոց հարցը, Բայց նոյն դրութեան մէջ չէինք երեք օր առաջ, երբ իրերի անյայտութիւնը մի դամբական թուր էր դառել բոլոր աշխարհի համար։ Ճանչելով նորան պարտապէս և վնասելով նախկին կերպով։ Հայոց ժողովրդի համար, աւելի քան թէ որ և ինչ ուրիշի, այդ անյայտութիւնը ունէր մի անհեթեթ և դժուարատար ծանրութիւն, վասն զի նա ծածկում էր իր վարագուրի յետև ամեն անհատի, բոլոր ազգի կենաց և մահու խնդիրը։ Հայ ազգի վիճակը նման է մի կուտակ խտոր, որը գտնվում է երկու վառվառ խորանայների մէջ, ամեն մի քանու հարուածից, ամեն կայծի ու բոցի անախտ ուղղութենից կարող է առաջ գալ նորա մոխրանալը։ Քաղաքականութիւնը, մասամբ այժմ ևս, այնպէս խնձկված է, պետութիւնների պահանջները և ուղղութիւնը եսական, կրեքը տիրապետող, որ նորա ստացած նոր ձևից ինչ յառաջ կը գայ հայոց ազգի համար—այդ դժուար է գուշակել, թէպէտ յուսալով կը յուսանք որ խոտի կուտակը պիտի անվնաս ու անզոհակ ազատվի կրեքերի ճանկից։ Թէ մինչև որ աստիճան վատութեան մէջ է տաճկահայր, օրինակ կը բերեմ գիւղացու խօսքերը և զգացումները։

Մօտ վեց ժամն էր երեկոյեան, երբ ուղեցի շահվել գեղեցիկ եղանակով—որ Էրզրում սակաւ է պատահում—և գնալ ձիով քաղաքի պատնէշից դուրս գտնուող երեսմասրդ բոխիչ Լ. Տ. անի հետ։ Գիւղացու սովորած էին աչքերին առաջ և այնչափ մօտաւորութեամբ, որ տներէ ծխահանները պարզ երևում էին մեզ։ Եւսանդոտ բարեկամ կամեցաւ անուշտ այցելել նոցանից մէկը, մանաւանդ որ նոքա բոլորը հայաբնակ էին։ Մեր աչքը դուրսից Գան դիւղը։ Նորա յետև փայտած էր Եփրատի սկզբում, որ սփռվելով մի մեծ տարածութեան, կազմում է լայնարձակ ձահիճներ, Մի ժամից յետ արդէն հասնւոք գիւղը, որից դուրս մի խումբ երեսմասրդի փայտեայ հրացաններով պարապում էին զինավարժական խաղերով։ Մեզ տեսածին պէս կանգնեցին առմենք ուղիղ գծով և երբ մօտեցանք, իրանց գլխաւորի հրամանով պատիւ արեցին մեզ դիմադրելով օրինակով։ Նոցա շարժուեցին էր անարգի, դէմքերը խիստ, երևի նոքա վեր էին ծաւել

այդ մեր զինուորներից, որոնք պաշարման ժամանակ միայն են շրջակայ գիւղերում։ Պէտք է ասել առհասարակ որ զինավարժական սէրը այնչափ խիստ կերպով է արտայայտվում տեղիս հայ մանուկների մէջ և այնչափ մեծ ու կանոնաւոր խմբերով են կատարվում այդ խաղերը, որ շատ անգամ արժանանում են զօրապետների հաւանութեան։ Նորեւա Էրզրումի նահանգապետ գեներալ Գուլիսիանով զարմանալով նկատել է թէ ինչու տաճկաց տեղութիւնը օդուտ չէ քաղել հայերից, որոնց մանուկները այս տեսակ աշխատութիւն և սէր են ցոյց տալի գէպի գիւղերականութիւնը։ Իսկ մայիսի մէկը տօնելու ժամանակ քաղաքից դուրս, բոլոր մեր զօրականները միակ համարձակութիւն ունեցել են այդ խաղացողների հետ։ Նոցա ուրաներից զերդում էր քաղաքը։ Օֆիցերները այդ օր իրանց անկեղծ հաւանութիւնը յայտնեցին կտրիճների առաջ բաւական մեծ փող թափելով։ Պիտի լինի արդեօք մի լուսապղծ օր, երբ զոյգ վարժմունքը հարկաւոր գայ իրանց հայրենիքին...

Մինչդեռ փոքրիկ Գանցիները անհոգ նուիրված էին դուրսնալիս, նրանց ծնողներին մաշում էր յուսահատութեան տագնապը։ Անցնելով գիւղի միջից, մենք պատահեցինք միայն մի երկու հոգու, որոնք դանդաղ ու անսիրտ գործում էին կացնով կարծես թուլացած արեւի ուժից։ Գիւղը հաշուում էր իր մէջ 500 տուն, վասնորայ զարմացանք ամառվեան վրա, բայց յայտնվեց որ բոլորը գտնվում էին երեկոյեան ժամասացութեան։ Գնացինք և մենք աղօթատուն։ Նա զարդարում էր և ընդարձակ, լի խիտ առ խիտ բազմութեամբ, որի վերմուտեղ երեկոյեան մենք եզրակացրինք որ հանդէսը տեղի ունէր որ և ինչ մեծ տօնի պատճառով։ Թէպէտ մի հասարակ օր, ժամը վերջնալուստ յետ իմ բարեկամը շտապեց հարցնել հանդիսի պատճառը, հեղուօրէն նկատելով թէ գանցիներին չէ կարելի գովել որ նորանք հետևում են օսմանցիներին օրինակին, արհամարհելով աշխատասիրութիւնը ու փնտռելով իրանց բարօրութիւնը աղօթատուն մէջ։— «Թողութիւն արեք, տէր իմ դուք անիրաւացի էք մեզ մեղադրում, ասեց մեզ շրջակայտեղներից մէկը. տեւեք Էրզրում քաղաքը, նրա մէջ ալազգիք երեք են, հայերը մէկ, բայց աշխատողները մենակ հայերն են, իսկ թիւքերը կամ անգործ ու պարագա կը պտտեն, կամ հայերին զրկելով կապրեն։ Ինչ Էրզրում է, տէր, այն էլ գիւղացուները, ինչ վարուցանք, արտեր և առուներ կը տեսնէք հայերի գործն է ամեն, իսկ տաճիկներ կամ բէզութիւն կանեն, կամ գողութեամբ մեր աշխատածը կուտեն։ Եւ հիմակ, ու տէր իմ, դու մեզ հաւասար կանես նրանց, ոչ, վալլահ ոչ տէր, դուք արդար չէք զրցել և չը գիտե՞ք թէ ինչու մենք ամեն օր մինչև արեգակի մար մտնելը կը թողնենք աշխատանք ու գործեր և կը ժողովենք եկեղեցին լալազին աղօթքին»։ Խօսողը վրա բարեկամ գցեց հարցողական հայեացք, որի պատասխանը այսպէս եղաւ։— «Մէկ կը լսենք թէ ռուսներ կերթան թողնելով մեզ տաճկի ձեռքին, մէկ թէ Էրզրում պիտի ռուսին մնայ, մէկ էլ կը խօսեն թէ մեր սուրը Նշանը, Լուսաւորիչ, Խաչափայտ, Կարմիր Վանը և բոլոր խոստատեղիք ու լուսաւորչի հաւատը պէտք է իսպառ աղատվի և մենք և մեր որդիք լինենք ազատ տէր մեր գլխին, մեր սուրը հաւատին, ու հողին երկրին»։ Այս խօսքերը արտայայտելիս բոլոր բազմութիւնը ձայնեց օրհնութիւն Աստուծոյ։— «Ո՞ր տեղից էք լսել այդ լուրը, հարցրեց բոխիչը փորձելով։»

— «Մէկ հաստատ տեղից լսած էինք տէր, բայց շատ կը խօսեն քաղաքում» պատասխանեցին խօսողները։— «Թէ դուք հաստատ տեղից չէք լսած, էն երկրիով ասած աշխոյժ բարեկամս, դէ՛ իմացէ՛ք մեզանից եկեղեցու ու Աստուծու առաջ, որ հայերը պէտք է ազատվեն թիւքի դուռնից ու լինին տէր իրանց աշխարհին...»։ Օրհնեմ է Աստուած, օրհնեմ լինի Նա հոգակեց բազմութիւնը օղը և կարծես զմեզանք նշանով սփռվեց երկրի վրա և սկսեց համբուրել հողը— Աստուծու ոտի փոշին։ Մնացինք երկուսս կազմած չիթված, որ գրգռեցինք բազմից սրտեր։ Կրկին վերկացած պատեցին մեզ և նորից սկսեցին աղերձ ու մաղթանք ուղարկել դուրսէն էլած Խաչատուրին։ Բժիշկին նշան արեցի չը բորբոքել աւելի ժողովրդի սիրտը և առնելով հետեւին հազար ջերմաշնորմ արթնքներ, նստեցինք ձիաներ լարուած է խեղճ ժողովրդի զգացմունքը ու սպասուած համբերութիւնը, այն ժողովրդի, որը մէկ կողմից աշխատել է իր հողի վրա, միւս կողմից լացել, մէկ կողմից տանջվել, միւս կողմից աղօթել, սիրել, երգել այն հայրենիքը, որի համար նա լուսում է այժմ ազատութեան ձայնը։

Վանի վեմ մարդասիրութեան գործ պիտի լինի յիրաւի մի այսպէս ազատութեան գործ...

Գր. Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պօլսից մայիսի 22-ին գրում են մեզ թէ իրիման շայրիկ Լօնդօնից կը գնայ Բերլին իր թարգման և քարտուղար պ. Մինաս Չերազի հետ, Նամակագիրը յայտնում է նաև թէ Եւդոկիայի (Թօքատ) առաջնորդ ձգնաւորան Յակոբ արքեպիսկոպոսի վրա առաջակներ յարձակվելով, վիրաւորել են։ Ստացած վէրքերը վտանգաւոր են եղել, բայց ազատվել է մահից։

— Կ. Պօլսի «Թէքէմանը Շարք» լրագրում կարդում ենք հետեւեալը։ «Իհն մի քանի օր է որ սկսած է շոգ անել և մեր քաղաքում տիֆից հիւանդացողների թիւը հարիւրին երեսուն աւելացել է այժմ, Բժիշկները քննելով պատճառը, իմացել են որ Թակսիմի ջրից առաջանում է այդ, որովհետև շատ մարդիկներ և կենդանիների դիակներ մնացել են Թակսիմի ջրի եկած ճանապարհներին և ակի մէջ և այժմ արեգակի ազդեցութեան տակ սարսափելի կերպով հոտել են։ Չորս բժշկապետներ ուղարկվեցան Թակսիմի ջրի ակը և նրա ճանապարհները քննելու հարկաւոր եղած որոշումները անելու համար։ Մեր ծանօթներից մի քանի բժիշկներ ասում են որ աւելի լաւ է հորի դառը ջուրը խմել, երբ այլ ջուր չի լինի, քան թէ Թակսիմի այդ վտանգած ջուրը։»

— Պօլսի Սայրիդից մայիսի 30-ին հեռագրում են թէ անգլիական Meinotaur շոգենաւը գնացել է դէպի Կրիտ կղզին։

— Կ. Պօլսից մայիսի 30-ին հաղորդում են հետեւեալը։ «Եթէ մի քանի կէտեր կարգադրվեն կոնգրէսի առաջին նստերում, անգլիական նաւատորմը յետ կը բաշվի Բէզիկեան նաւահանգիստ, և ռուսները Ալգիրանսօյը։

— «Kreuz Zeitung» գրում է որ պատրաստութիւններ են տեսնվում կոնգրէսի նիստերի համար Բերլինում իշխան Բիսմարկի պալատում որ արտաքին գործերի պաշտօնատան կից է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Առողջ պահպան միջոցներ կահաւորած սենեակներ և իր արագ բերութեամբ փարեղում շատ օգտակար միջոց է ընդունված կահաւորած սենեակների առողջապահական պայմանների վերաբերութեամբ։ Պատերի վրա կազմած են պօլիէթիլի վերակացու յայտարարութիւններ, որով իմաց է տրվում կահաւորած սենեակներ բռնել ցանկացող բոլոր անձերին, որ հինգ օր անցնելուց յետոյ նրանց սենեակները կայցելեն լաւաւանքին տեսուչներ, այդ սենեակները քննելու և գննելու համար, Ուրիշ առողջապահական պայմանների թուով գտնվում է և այն որ սենեակները ունենան օդ ոչ պակաս 14 կուբիքական մետրից իւրաքանչիւր մարդու վրա։

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՅ, 2 յունիսի «Правит. Вѣст.» լրագրում տպւած է. Կոմս Պալէն իր խնդրէն համեմատ արձակված է արդարութեան միջոցների պաշտօնից։ Գաղանի խորհրդատու Նաբոկով նշանակված է նրա տեղը։ Կայսրուհու առողջութիւնը աւելի լաւ է, թէպէտ թոյլութիւն դարձեալ կայ։ Թագաւոր Կայսր Յարսկոսկիի պալատում համադիւսուոր տեսակցութիւն տուեց թիւրքաց զեհպան Շակիր-փաշային։

ԲԵՐԼԻՆ, 2/14 յունիսի։ Նրէկ ժամի երկուսին կօնգրէսը բացվեց Կայսրական կոնցլերի պալատում։ Նրէկ երեկոյեան հասն թիւրքաց պատգամաւորները։ Կոնգրէսի նախադրուած հոգիները իշխան Բիսմարկին է յանձնած։ Անգլաշէ առաջ. Բիսմարկի նախագահ ընտրելու պատճառը այնքան ընդունված սովորութիւնը չէ, որքան նորա կարգից դուրս ծառայութիւնների խոստովանելը։

ՎԻԵՆԱ, 1/13 յունիսի «Polit Correspond.» լրագիրը հաղորդում է, որ Բուլղարիայի եւսանդոտ բողոքների համեմատ, ռուսաց զօրքերի Պիտեշի գծով առաջ գնալու համար, գէներալ Կրէստէն հրամայեց զօրքերին հեռանալ ռուսական գիծերից 10 կիլօմետր տարածութեամբ, միւս կողմից նա հրամայեց ռուսաց պահպան կայսրաններին առաջ գնալ Պիտեշից գէպի Ֆիլիպշտի։

ԼՕՆԴՈՆ, 2/14 յունիսի «Globe» լրագիրը իր պատասխանատուութեամբ հրատարակեց Ռուսաստանի և Անգլիայի համաձայնութեան բնագիրը, որ մայիսի 30-ին ստորագրել են Սալեբուրի և Կոմ Շուվալով։ Անգլիան պահանջում է, որ Եւրոպայի մասնակցի բոլորական երկու նահանգների կառավարութեանը։ Անգլիան կօնգրէսում կը բնի ռուսաց զօրքերի Բոլգարիայում մնալու ժամանակամիջոցի բնաւորութիւնը և նրանց անցնելը Բուլղարիայով։ Անգլիան քննութեան կենթարկի հարաւային նահանգի անուան հարցը և Իուսայ գետի նաւազնացութիւնը, չը դիպչելով հողային հարցին։ Անգլիան և Ռուսաստանը համաձայն են պահպանել statu quo Բոսֆորի վերաբերութեամբ։ Անգլիան կը խնդրի սւլթանից պաշտպանել Աֆօնեան սարի օտար զորքերի վարդապետներին։

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՅ, 3 յունիսի «Правит. Вѣст.» լրագրում տպւած է հետեւեալ բնութեանը Կայսրուհու առողջութեան մասին. տեսնուցին դրութիւնը վերջացաւ, ակտիւսկը և ոյժերը վերականգնվում են։ Նորին Կեծութիւնը առողջանում է։— Բօտիկին։

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՅ, 3 յունիսի։ Պետական բանկի 50% տոնակը առաջին շրջանի արժէ 98 ռ. 75 կ., երկրորդ 95 ռ. 75 կ., երրորդ 95 ռ. 62 կ., չորրորդ 95 ռ. 72 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոնակը արժէ 239 ռ., երկրորդ 232 ռ. 75 կ., արեւելեան 94 ռ. 87 կ., ոսկին 7 ռ. 93 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,78 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 211 մարկ, Փարիզի վրա 260 ֆրանկ, կերօսին 350։

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՅ, 5 յունիսի «Голосъ» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից հետեւեալը. Բ. Իուսուր յայտնեց հայոց պատրիարք Ներսէսին իր աստիճան անբաւականութիւնը այն յուզմունքի մասին, որ յարուցել է Ս. Պետերբուրգում Թիւրքիայի հայերի պատգամաւոր Խորէն Նարբէյ Լուսինեան, Բեշկտաշի արքեպիսկոպոսը։ Բ. Իուսուր խորհուրդ է տալիս Ներսէս պատրիարքին Խորէն եպիսկոպոսին յետ կանչել Կ. Պօլս։ Պատրիարքը հրաժարվում է հետեւել այդ խորհրդին։

ԲԵՐԼԻՆ, 3/15 յունիսի։ Թէպէտ կօնգրէսը հիշաւորթից յետոյ նիստ չէ տեսնել, բայց լիազոր հաւատարմատարները մեծ գործունէութիւն են ցոյց տալիս Միմեանց մէջ մասնաւոր կերպով յաճախ խորհրդակցում են։ Բիսմարկ այդպիսի խորհրդակցութիւններին աւելի մեծ նշանակութիւն է տալիս, քան թէ հանդիսաւոր նիստերին, որովհետև կօնգրէսի պաշտօնական նիստերի գլխաւոր նպատակն է ցոյց տալ բոլոր հաւատարմատարներին ընդհանուր համաձայնութիւնը այն կէտերի առթիւ, որոնք էապէս վճռված են առանձին հաւատարմատարների մասնաւոր բանակցութիւնների միջոցով։

ՐԱԳՈՒՋԱ, 3/15 յունիսի։ Այսօր թիւրքերի և չէրօզօրցիների մէջ բացարձակ թշնամական գործողութիւն յայտնվեցաւ ձախտամարտը ամբողջ օր տեսնել։ Մանրամասնութիւններ չը կան։

ՐԱԳՈՒՋԱ, 5/17 յունիսի։ Չէրօզօրցիները վերջին կուր ժամանակ թիւրքերի հետ գերի վերցրին 60 ալանցիներ։

ԲԵՐԼԻՆ, 5/17 յունիսի։ Կօնգրէսի նիստը բացվեցաւ կէսօրից յետոյ երկու ժամին։ Կօնգրէսի նիստերը գաղտնի են։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ